ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՊԱՐՈՆ Ա. Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Որոշում

«Ֆոտոն» ՍՊԸ-ին և «Հայկազունք» ՍՊԸ-ին

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձաց ցուցակում ներառելու մասին

Հայտնում եմ Ձեզ, որ 02.08.2023թ.-ին ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարվել է դպրոցի 2023թ. կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02 ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգ: Արդյունքների ամփոփման նիստում **«Ֆոտոն» ՍՊԸ-ն** (գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ռոստոմի 58) 7,19 չափաբաժինների մասով և **«Հայկազունք» ՍՊԸ-ն** (գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Աջափնյակ, Նորաշեն 18 բն 41) 2,12,13,16 չափաբաժինների մասով հայտարարվել են ընտրված մասնակից: Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի, սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվել է ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Մասնակցների հետ կնքվել է պայմանագիր, համաձայն որոնց վերը նշված ընկերությունները պարտավորվել են «Նոր Հաճնի №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեում: Ըստ պայմանագրի մատակարարման ենթակա ապրանքի հերթական ծավալը որոշում է պատվիրատուն՝ ելնելով աշակերտների փաստացի քանակից:

28.11.2023թ-ին պահանջագրերի դիմաց ապրանքի մատակարումը «Ֆոտոն» և «Հայկազունք» ՍՊԸ-ները չեն իրականացրել: Կատարված բազմաթիվ զանգերին չեն պատասխանել: Մատակարարների դիմել ենք էլեկտրոնային գրությամբ, որպեսզի սահմանված ժամկետում իրականացնեն մատակարարումը: Այդ ժամանակահատվածում ԶԼՄ-ներում շրջանառվել է նաև «Ֆոտոն» և «Հայկազունք» ՍՊԸ-ների նկատմամբ հարուցված քրեական վարույթի մասին տեղեկատվություն:

Առաջնորդվելով «31» օգոստոսի 2023թ. կնքված ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02 -1 և ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02 -2 պայմանագրերի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ պարբերությամբ և 8.11 կետով «Նոր Հաճնի №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ը 11.12.2023թ.-ին միակողմանի լուծել է

պայմանագրերը: Պատշաճ ծանուցումը ապահավելու նպատակով կիրառվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթները:

Ելնելով վերը նշվածից և առաջնորդվելով ՀՀ ***«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա » պարբերությամբ*** խնդրում եմ Ձեզ «Ֆոտոն» և «Հայկազունք» ՍՊԸ-ներին ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքից զրկված անձաց ցուցակում:

Կից ներկայացնում եմ մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ֆոտոն» ՍՊԸ	90036001	ՀՀ ք. Երևան, Ռոստոմի 58		V		21.12.2023թ. ՆՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02
«Հայկազունք» ՍՊԸ	00031526	ՀՀ ք. Երևան, Աջափնյակ, Նորաշեն 18 բն 41		V		21.12.2023թ. ՆՀՀԴ-ԳՀԱՊՁԲ 2023/02

Տնօրեն _____ Գարիկ Աբրահամյան

Կատարող՝ Գնումների համակարգող

Կ. Հովսեփյան, հեռ. 093-73-11-99